Շիրակի մարզպետ

պարոն Ֆ. Ցոլակյանին

Ռադիկ Ռաթևոսի Դավթյանից

/Արմավիրի մարզ, գ. Սարդարապատ 1փ. տուն 54/

Հարգարժան պարոն մարզպետ

Ս/թ հուլիսի 24-ին ես և իմ համագյուղացի Հայկ Սիրականյանը մեր հանգիստը որոշեցինք անցկացնել Արփի լճի գեղատեսիլ ափին:

Ժամը 20:00-ի սահմաններում որոշեցի նավակով դուրս գալ լիճ ձկնորսության: Ափից մոտ 500 մետր հեռավորության վրա ինքնազգացողությունս կտրուկ վատացավ և չհասկացա թե ինչպես հայտնվեցի ջրում: Սկզբում փորձեցի ինքնուրույն դուրս գալ ջրից, բայց ապարդյուն: Մոտ 30 րոպե մնացել եմ ջրում և զգում էի թե ինչպես է ուժերս դավաճանում ինձ: Հանկարծ նավակով հայտնվեցին մարդիկ, ովքեր ինձ փրկեցին՝ դուրս հանելով ջրից և ցուցաբերելով առաջին օգնությունը: Հետո պարզվեց, որ այդ մարդիկ <<Արփի լիճ>> ազգային պարկի տնօրեն ԱրաՊետրոսյանն էր իր աշխատակիցներով՝ օպերատիվ խմբի ղեկավար Ռուդիկ Սարգսյանը, Սամվելը, Արթուրը և այլն:

Հարգարժան պարոն Ցոլակյան

Ուզում եմ այս դեպքի առիթով իմ խորին երախտագիտությունս հայտնել Ձեզ և <<Արփի լիճ>> ազգային պարկի տնօրեն Արա Պետրոսյանին և իր ողջ անձնակազմին՝ ինձ օպերատիվ ձևով առաջին օգնությունը ցույց տալու և իմ կյանքը փրկելու համար:

Շնորհակալ եմ

Ռ. Դավթյան